

ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

CW-NCB-LRNIP-AF-2016/5

Հայաստանի Հանրապետություն

Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր

Վարկի No. 8523-AM

Պայմանագրի անվանումը՝ ԱՃ Մ-2-Սիսիան կմ 0+000 - կմ 5+872 ճանապարհային հատվածի վերանորոգման շինարարական աշխատանքներ
Հղում No. CW-NCB-LRNIP-AF-2016/5

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է լրացուցիչ ֆինանսավորում Կենսական Նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով, և մտադիր է այդ գումարից վճարումներ կատարել ԱՃ Մ-2-Սիսիան կմ 0+000 - կմ 5+872 ճանապարհային հատվածի վերանորոգման շինարարական աշխատանքներ պայմանագրի շրջանակներում: Այս պայմանագիրը իրականացվելու է Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացն իրականացվելու է ՀԲ-ի կողմից սահմանված կանոնների և ընթացակարգերի պահանջների համաձայն:

2. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը հրավիրում է ներկայացնելու փակ հայտեր՝ իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող հայտատուների կողմից Պայմանագիր CW-NCB-LRNIP-AF-2016/5 ներքո ԱՃ Մ-2-Սիսիան կմ 0+000 - կմ 5+872 (ՀՀ, Սյունիքի մարզ) ճանապարհային հատվածի վերանորոգման շինարարական աշխատանքներն իրականացնելու համար: Աշխատանքները ներառում են՝ գոյություն ունեցող ենթահիմքի քանդում և նոր ենթահիմքի կառուցում, նոր խճային հիմքի կառուցում, ասֆալտե ծածկույթ, փոսային նորոգում, հարթեցնող շերտի տեղադրում, ասֆալտ-բետոնե շերտի տեղադրում, ջրահեռացում, ճանապարհային անվտանգության ապահովման աշխատանքներ: Աշխատանքները պետք է ավարտվեն 12 ամսվա ընթացքում:

Պայմանագրին արժանանալու համար հայտատուն պետք է ունենա նմանատիպ շինարարական աշխատանքների փորձ եւ համապատասխան ռեսուրսներ, ինչպես մանրամասնվել է մրցութային փաթեթում:

3. Մրցույթը կիրականցվի Համաշխարհային Բանկի կողմից ընդունված և 2011թ հունվարին հրապարակված և 2014թ հուլիսին վերանայված <<Ուղեցույցներ: ՄՁՎԲ վարկերի և ՄՁԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում վարկառուների կողմից ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ>> ուղեցույցներով (Գնումների ուղեցույց) սահմանված գործընթացների կազմակերպմամբ՝ Ազգային Մրցակցային Մրցույթի եղանակով: Մրցույթը բաց է Գնումների ուղեցույցում սահմանված բոլոր իրավասու հայտատուների համար: Ի լրումն, խնդրում ենք անդրադառնալ 1.6 և 1.7 կետերով սահմանված շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային Բանկի քաղաքականությանը:

4. Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկից esargsyan@transportpiu.am, hordukhanyan@transportpiu.am, armenabovyan@transportpiu.am և ուսումնասիրել դրանք ստորև նշված հասցեում՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին ժամը 09:00-ից մինչև 17:00:

5. Հետաքրքրված իրավասու հայտատուների կողմից ամբողջական մրցութային փաթեթը անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեով գրավոր դիմում ներկայացնելու և 50,000 ՀՀ դրամ գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է՝ բանկային փոխանցումը հետևյալ հաշիվներին.

Շահառու. ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկ

ՀՀ դրամի համար. Հաշիվ #900000908096

ՀՀ Կենտրոնական բանկ

Մրցութային փաթեթը (հնարավոր հայտատուները կարող են ծանոթանալ նախագծերին ՏՕԲ գրասենյակում) հասանելի կլինի նաև www.gnumner.am կայքում: Սակայն ՏՕԲ-ը պատասխանատվություն չի կրում թերի կամ սխալ ներբեռնված փաստաթղթերի համար:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև 2016թ. հուլիսի 06-ը, ժամը 15:00: Չի թույլատրվում ուղարկել հայտերը էլեկտրոնային փոստով: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն 2016թ. հուլիսի 06-ին, ժամը 15:01 (Երևանի ժամանակով) մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ ստորև նշված հասցեով:

7. Հայտը պետք է ուղեկցվի Մրցույթին մասնակցելու երաշխիքով՝ 16 300 000 (տասնվեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

8. Վերևում նշված հասցեն է՝

<<Տրանսպորտի ԾԻԳ >> ՊՀ սենյակ N 312ա

պրն. Է.Սարգսյանին, <<Տրանսպորտի ԾԻԳ >> ՊՀ տնօրեն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

ՀՀ, Երևան 0010, Նալբանդյան 28

Հեռ.՝ (+37410) 58 05 23,

Ֆաքս՝ (+37460) 54 05 25

Էլ. Փոստի հասցե՝ esargsyan@transportpiu.am, hordukhanyan@transportpiu.am, armenabovyan@transportpiu.am